



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԿ



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».

Անի Սահակյան. Վիրտուալ կազմակերպությունների առանձնահատկությունները..... 155
Ani Sahakyan. Features of Virtual Organizations
Ани Саакян. Особенности виртуальных организаций

Վահագն Տեփոյան. Տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների գործոնային վերլուծություններ..... 164
Vahagn Teroyan. The Factor Analysis of the Influence of the Financial System Indicators on the Summarized Economic Indicators
Ваагн Тепоян. Факторный анализ влияния показателей финансовой системы на сводные экономические показатели

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

Մերի Հովհաննիսյան. Հեռավար ուսուցման առանձնահատկությունները..... 178
Meri Hovhannisyan. Peculiarities of Distance Learning
Мери Ованнисян. Особенности дистанционного обучения

ԼԵԾԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Լուսինե Սողոմոնյան. Գերմաներեն երկխոսության հոգելեզվարանական բնութագրերը..... 188
Lusine Soghomonyan. The Psycholinguistic Characteristics of German Dialogues
Лусине Согомонян. Психолингвистические характеристики диалогов в немецком языке

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Անուշ Թասալյան. Եղիշե Չարենցը և «Ստանդարտ» հանդեսի միակ համարը..... 199
Anush Tasalyan. Yeghishe Charents and the Only Issue of «Standard» Magazine
Ануш Тасалян. Егише Чаренц и единственный номер журнала «Стандарт»

Արամ Խաչատրյան. Փնացքի ու երկաթուղու ֆունկցիոնալ նշանակությունը Հրաչյա Սարիբեկյանի «Ապուլների ուղևորությունը» վեպում..... 206
Aram Khachatryan. Functional Significance of the Train and Railway in the Novel «Journey of Idiots» by Hrachya Saribekyan
Арам Хачатрян. Функциональное значение поезда и железной дороги в романе «Путешествие идиотов» Грачьи Сарибекяна

Շուշան Խաչատրյան. Մուխտար Աուեզովը և դազախական դրամատուրգիան 1920-1940-ական թթ.-ին..... 213
Shushan Khachatryan. Mukhtar Aueзов and Kazakh Dramaturgy in the 1920-1940s
Шушан Хачатрян. Мухтар Ауэзов и казахская драматургия в 1920-40-ых годах

Սիրանուշ Փարսադանյան. Պատմական դեպքերի գեղարվեստական մարմնավորումը Հովհ. Սիրոզյան Վանանդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում..... 223
Siranush Parsadanyan. Fictional Illustration of Historical Events in «Hayk, Aram and Ara's Scene» Poem by Hovhannes Mirzayan Vanandetsi
Сирануш Парсаданян. Художественное олицетворение исторических событий в поэме «Знаменитые деяния Айка, Арама и Ара» Ованнеса Мирзаяна Ванандеци

**ԳՆԱՑՔԻ ՈՒ ԵՐԿԱԹՈՒՐՈՒ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ
«ԱՊՈՒՇՆԵՐԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՊՈՒՄ***

ՅՏԴ 82.09

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
aramkhachatryan93@mail.ru*

Հոդվածի նպատակը Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» վեպում առանցքային նշանակություն ունեցող գնացքների ու երկաթուղիների մոտիվի համակողմանի ուսումնասիրությունն է: Սարիբեկյանի՝ մինչ օրս հրատարակված բոլոր գրքերում գնացքների ու երկաթուղիների թեման անցնում է մի գործից մյուսը՝ ստեղծելով տպավորություն, որ գրողը երբեք չի հրաժարվելու այս մոտիվից:

Առաջադրված խնդիրը այս վեպում վերոնշյալ մոտիվի համակողմանի քննությունն է՝ թե՛ բովանդակային և թե՛ կառուցվաքային առումով: Վերլուծությունը ըստ անհրաժեշտության կատարվել է հեղինակի նախորդ գործերի համատեքստում: Որոշ դեպքերում շրջանակը ընդլայնվում է՝ ներառելով հայ գրականության ու համաշխարհային գրականության՝ այս մոտիվի հիմամբ կառուցված պատումները:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ համեմատություն, վերլուծություն, համադրություն և դեդուկցիա:

Վեպը հրատարակվել է 2015 թվականին, և դեռևս դրա վերաբերյալ չկա համապարփակ ուսումնասիրություն, ինչն էլ պայմանավորում է հոդվածի նորություն ու արդիականությունը:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ գնացքի ու երկաթուղու մոտիվն այս վեպում դրսևորվում է երկու նշանակությամբ: Մի պարագայում այն հարաբերվում է ժամանակի, ժամանակի զգացողության ու կյանքի շրջափուլի հետ, մյուս դեպքում՝ դառնում պատերազմի, մահվան, վախի ու անորոշության խորհրդանիշ: Մոտիվի ֆունկցիոնալ նշանակության փոփոխությունը երկու դեպքում էլ անդրադառնում է պատումի կառուցման և կերպարների հոգեբանական վարզացման վրա: Համաշխարհային գրականության մեջ լայնորեն կիրառվող այս մոտիվը Սարիբեկյանի վեպում կիրառված է լավագույնս:

Հիմնաբառեր՝ վեպ, գնացք, երկաթուղի, հայ գրականություն, մոտիվ, պատերազմ, խորհրդանիշ, ժամանակ:

Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» վեպում⁴⁸³ առանձնակի նշանակություն ունեն գնացքն ու երկաթգիծը: Գնացքի ու երկաթգծի հարաբերությունն ու այլաբանական իմաստը վեպում այնքան զգալի են, որ Սարիբեկյանն անգամ վեպը բնորոշել է որպես «երկաթուղային վեպ»: Սակայն վեպի տեսության ու պատմության մեջ

** Հոդվածը ներկայացվել է 11.09.2020թ., գրախոսվել՝ 19.09.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:*

483 Սարիբեկյան Հ., Ապուշների ուղևորությունը, Երևան, «Անտարես» հրատ., 2015: Վեպից բոլոր քաղվածքները կարվեն նույն հրատարակությունից, և էջերը կնշվեն տեքստում:

«երկաթուղային վեպ» ժանր գոյություն չունի, և ինչպես Վալերի Փիլյոյանն է նշում այս վեպի առնչությամբ, «երկաթուղայինը ժանրակազմիչ յուրահատկություն չէ»⁴⁸⁴:

Սարիբեկյանի ստեղծագործական համակարգում գնացքների ու երկաթուղիների թեման անցնում է մի գործից մյուսը՝ ստեղծելով տպավորություն, որ գրողը երբեք չի ազատվելու այս թեմայից: Հարցազրույցներից մեկում նա նշում է. «Անբացատրելի հետաքրքրություն ունեմ երկաթուղիների ու գնացքների հանդեպ և անհաղթահարելի ցանկություն անընդհատ երկաթուղային պատմություններ ստեղծել: Իմ շատ ստեղծագործություններում գնացքներ ու երկաթուղիներ կան, ինձ համար կա գրականություն գնացքների և գրականություն մնացած այլ բաների մասին: Ինձ համար գնացքների մասին ստեղծագործություններն առանձնանում են այն աստիճան, որ ժանրի իրավասություն ունեն»⁴⁸⁵:

1883 թվականի հոկտեմբերի 6-ին հռչակավոր «Արևելյան ճեպընթացը» կատարում է իր առաջին՝ Փարիզ-Կոստանդնուպոլիս ուղևորությունը՝ սկիզբ դնելով գնացքների ու երկաթուղիների վերաբերյալ գրականությանը⁴⁸⁶:

Հետանկախության շրջանի հայ գրականության մեջ որպես գնացքով սկսվող ու ավարտվող վեպ կարելի է նշել Գուրգեն Խանջյանի «Նստիր Ա գնացքը» վեպը: Հայ ընթերցողներին առավելապես ծանոթ «երկաթուղային վեպերի» շարքում կարելի է առանձնացնել նաև Վենեդիկտ Երոֆեևի «Մոսկվա-Պետոուշկի» վիպակը, որից էլ հեղինակը վերցրել է վեպի բնաբաններից մեկը⁴⁸⁷:

Բազմաթիվ են այն զեղարվեստական գործերը, որոնցում գնացքն ու երկաթուղին ունեն կարևորագույն ֆունկցիոնալ նշանակություն: Գնացքն ու երկաթուղին որպես վախի ու մահվան, ժամանակի ու անորոշության խորհրդանիշ, որպես միջոց՝ ճանապարհային երկար զրույցների համար, ամենատարբեր սիմվոլներով հագեցած՝ մտել են գրականություն հազարավոր էջերով:

Ժամանակն ու տարածությունը կարճող գնացքը դառնում է նորի խորհրդանիշ, որը և՛ հմայք է պատճառում, և՛ վախ է առաջացնում: Որպես լավագույն օրինակ՝ կարելի է նշել Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը. Չարենցը գնացքի նկարագրությամբ է սկսում նոր քաղաքի պատկերումը: Գնացքը դառնում է խորհրդանիշ՝ հնից դեպի նորի անցման. «Ամենամեծ նորությունը, որ նաիրյան չէ և նույնիսկ անընտել, անհասկանալի է թվացել սկզբում տեղացիների աչքին, երկաթուղագիծն է՝ ձգված ռուսների տիրապետության օրով՝ բսան տարի առաջ: Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է անմոռանալի այն օրը, երբ անհայտ հեռուներից մինչև այդ քաղաքը ձգված երկաթե գծերի վրայով առաջին անգամ մոտեցել է գնացքը նորակառույց կայարանին: Եղել է խնդուն խրախճանք, զարմանալի զարմանք: Եղել են

⁴⁸⁴ **Փիլյոյան Վ.**, «Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» երկը, <http://www.grakanter.am/1222-2/>:

⁴⁸⁵ «Պատերազմի արևուրդը «Ապուշների ուղևորության» մեջ», <https://mediamax.am/am/news/BookHouse/20028/>:

⁴⁸⁶ Յույց տալու համար, թե «Արևելյան ճեպընթացը» ինչ մեծ արձագանք է գտել զեղարվեստական գրականության մեջ, կարելի է թվարկել համաշխարհային ճանաչում ձեռք բերած մի քանի գրքեր՝ Ագաթա Քրիստիի «Սպանություն Արևելյան ճեպընթացում», Գրեհեմ Գրինի «Ստամբուլի ճեպընթաց», Սիդնի Շելդոնի «Եթե կգա վաղը», Յան Ֆլեմինգի «Սիրով Ռուսաստանից», Վերոնիկա Յենրիի «Գիշերը Արևելյան ճեպընթացում»:

⁴⁸⁷ «Բայց, այբր, ինչո՞ւ՝ պատուհանի ետևում եսքան մութ, ո՞վ կբացատրի ինձ: Ինչո՞ւ է պատուհանից դուրս խավարը եսքան խիտ, եթե գնացքը դուրս է եկել առավոտը և կտրել է ընդամենը հարյուր կիլոմետր: Ինչո՞ւ»: **Ерофеев В.**, Москва — Петушки, Санкт-Петербург, 2019, էջ 41 (թարգմանությունը՝ Սարիբեկյանի):

մարդիկ, որ զարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել, առնվել է լեզուները զարմանքից ու հիացմունքից»⁴⁸⁸:

Գնացքները գեղարվեստական գործերում ֆունկցիոնալ նշանակությամբ հաճախ հարաբերվում են նաև պատերազմին: Պատերազմական իրավիճակներում ցամաքային տարածքներում ամենաարագ ու անվտանգ բեռնափոխադրման միջոցը եղել է գնացքը: Մարդիկ պատերազմի դաշտ են մեկնել գնացքներով, և կայարաններում խմբվածները ռազմաճակատ ուղևորվող գնացքը միշտ էլ ասոցացրել են պատերազմի, անորոշության ու մահվան հետ: «Չտեսության հովիտ» պատմվածքում Վանո Սիրադեղյանը այսպես է ներկայացնում դեպի անորոշություն ուղևորվող մարդկային ճակատագիրը. «Կյանքում մի անգամ իջնում են նման կայարաններում և նորից գնացք նստելով՝ գնում ծովում են չորս միլիարդ անդամ գանգվածին»⁴⁸⁹:

Յարցագրույցներից մեկում անդրադառնալով վեպում գնացք-պատերազմ հարաբերմանը՝ Սարիբեկյանը նշել է. «Գնացքը դարձել է պատերազմի խորհրդանիշ և, իրոք, ի՞նչ է պատերազմը, եթե ոչ չվացուցակներից դուրս, չնախատեսված գնացք, որի ուղևորները չեն հասկանում, թե ուր են տանում իրենց»⁴⁹⁰: Իսկ վեպի հերոսներից մեկն ասում է. «Պատերազմն էլ է չսպասված գնացք» (էջ 50):

Այս տեսանկյունից հետաքրքիր է վեպի առաջին գլխի բնաբանը, որի ազդեցությունը թե՛ Սարիբեկյանի հարցազրույցում, թե՛ գրքի համապատասխան հատվածներում զգալի է: Ստեֆան Գրաբինսկու «Թափառող գնացքը» (1919 թ.) պատմվածքից քաղված հատվածը վեպի կոնտեքստում ընկալվում է որպես առանց արտոնության գիծ դուրս եկած գնացքի միջոցով պատերազմի այլաբանություն. «Պետական երկաթուղագծերում արդեն որոշ ժամանակ է, ինչ հայտնվել է մի գնացք, որ չվացուցակներում ընդհանրապես բացակայում է, զրանցված չէ ոչ մի փաստաթղթով, չի հիշատակվում երթևեկող կազմում, մի խոսքով օտարական առանց արտոնության և գիծ դուրս գալու որևէ թույլատվության: Չի հաջողվել նույնիսկ պարզել, թե ինչ կատեգորիայի է պատկանում գնացքը և որ դեպոյից է դուրս եկել: Զանի որ կարճ ակնթարթներին, երբ տեսել են այն, կողմնորոշվել ընդհանրապես հնարավոր չի եղել» (էջ 3): Ռեյտերի վրա դրված ահռելի գնացքը, որ այստեղ պատերազմի բացարձակ խորհրդանիշն է, չի հանդուրժում և ոչ մի կարմիր լույս: Մարդկային կյանքի արժեքն ու հումանիստական «կարմիր լույսերը» ի գործ են կանգնեցնելու պատերազմը:

Վեպում կայարանին մոտեցող բեռնատար գնացքը իր ահռելի չափերով մահվան ծանր շունչ է հաղորդում շրջապատին: Գնացքն այս պարագայում ևս ներկայացվում է որպես մահվան ու պատերազմի խորհրդանիշ. «Այ քեզ ահռելի գնացք, այ քեզ գնացքի բարձրություն, այ քեզ վագոններ: Հողն է դողում, ապակիներն են դողդողում: Գնացքը մարդատար չէ, ձևերն ընդհանրապես ժխտում են մարդկայինը: Մի չար հանճարի մտահաղացում է: Չրահագնացքի դիմացը խաղալիք է: Վագոնների սև, ծուրտ կապարը թաքցնում է չարագուշակ ու ծանր մի պարունակություն: Գնացքը շատ է դանդաղ սահում, ասես նրա համար, որ ռեյտերը դիմանան իր ծանրությանը: Շոգեբարչ լիներ, հրաբուխ էր պետք հնոցի համար: Սահում է ահեղ վագոնաշարը: Բոլորը քարացել են՝ ասես թիկունքի անտեսանելի ուժը հրում է իրենց այդ վիթխարի հրեշի մամլիչ-անիվների տակ» (էջ 48): Վագոնների «չարագուշակ ու ծանր» պարունակությունը, ամենայն հավանականությամբ, սահման տեղափոխվող զինամթերքն է: Սարիբեկյանը մռայլ գնացքի ու վագոնների պարունակության մեջ է կարծես խտացրել պատերազմի ամբողջ արհավիրքն ու դառնությունը:

⁴⁸⁸ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատոր 5, Երևան, 1966, էջ 30:

⁴⁸⁹ <http://andin.am/2015/12/23/>:

⁴⁹⁰ «Պատերազմի արսուրդը «Ապուլների ուղևորության» մեջ»,

<https://mediamax.am/am/news/BookHouse/20028/>:

Մեջբերված հատվածում «մի չար հանճարի մտահաղացում» արտահայտությունը, որը կրկնում է նաև հեղինակը իր նույն հարցազրույցում («Ուղղակի սոսկում եմ, թե ոնց են բազմապատկվում ու կատարելագործվում մարդուն ժխտող անհոգի երևույթներն ու մեխանիզմները: Չենք, ինչպես Սվիֆթն էր ասում՝ «չար հանճարների այդ մտահաղացումը»: Միթե սարսափելի չէ, որ մարդ ոչնչացնելու միջոցը օրեցօր ավելի ու ավելի եսթետիկ ու գրավիչ տեսք է ստանում, ինչը՝ են սպանելու գործիքը մանուկների համար որպես խաղալիք արտադրում»), պատկանում է անգլիացի երգիծաբան Ջոնաթան Սվիֆթին: Սվիֆթը իր «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպում գրում է. «...և այնքան ընտելանալ դրանց, որ անտարբեր լինեմ արյան ու ավերի տեսարաններին, որ ես նկարագրեցի իբրև մի սովորական հետևանք այդ կործանարար մեքենաների, որոնց առաջին գյուտարարը, նրա ասելով, պետք է որ չար հանճար լինի և թշնամի ամբողջ մարդկության»⁴⁹¹:

Պատերազմում մարդ սպանելը դառնում է միզապարկը դատարկելու պես մի բան («Միզում, վերջացնում ու թեթևացած շունչ է քաշում: Մարդ սպանելը միզապարկ դատարկելուն հենց դրանով է նման՝ երկուսից հետո էլ շունչ ես քաշում» (էջ 43): Եվ երկաթուղու վրա վառվող կարմիր սեմաֆորը, որ պիտի կասեցնե՞ր գնացքի ընթացքը, նույնն է թե՛ պատերազմը, ի գորու չէ:

Վեպի վերջում Սարիբեկյանը ուղղակիորեն տարբերություն չի դնում պատերազմի ու գնացքի միջև: Հերոսներից մեկի՝ Միթևանու առնչությամբ նա գրում է. «Ոմանք ասում էին, թե իր ձեռքը նա պատերազմում է կորցրել, ոմանք՝ գնացքի տակ է մնացել, ոմանք էլ՝ թե հաստոցն է թռցրել: Ասենք ինչ տարբերություն՝ անողոք, պողպատե ատամներով փայտանյութ խժռող հաստոցի ու պատերազմի միջև: Հաստոցի, որ մարդկային ձեռքի ու փայտի միջև խտրություն չի դնում. «Ինչ տարբերություն պատերազմի ու գնացքի միջև» (էջ 154), կամ մի այլ պարագայում՝ «Ինչ տարբերություն ատամի հիվանդության և խաղալիք գնացքի ճշող ծանրության միջև» (էջ 157):

Այս պարագայում երկաթուղին նույնպես փոխում է իր ֆունկցիոնալ նշանակությունը՝ դառնալով դժոխքի ճանապարհ («Դժոխք տանող երկաթուղին է» (էջ 48):

Վեպում գնացքը նաև փոխում է իր ֆունկցիոնալ նշանակությունը՝ հարաբերվելով ժամանակի, ժամանակի զգացողության ու կյանքի շրջափուլի հետ: Ե՛վ «Գուշակություններ հայելիներով» ժողովածուում, և՛ «Երկվորյակների արևը», և՛ «Ապուշների ուղևորությունը» վեպերում այլօժեին ներհյուսված այս մոտիվը անպայմանորեն առկա է: Երեքի դեպքում էլ գնացքը, երկաթգիծը, ժամանակը, միախառնված երազներին ու եկթագիտակցությանը, ստանում են գեղարվեստական կարևոր նշանակություն:

Ժամանակի մեջ ապրող և ժամանակի զգացողություն ունեցող մարդու համար ժամանակը ինչ-որ մի կետից չի սկսվել և չի վերջանալու ինչ-որ կետում, այնպես, ինչպես գնացքում գտնվող մարդու զգացողության մեջ գնացքի ընթացքը չունի սահմանափակում և չի սկսվում ինչ-որ մի կետից՝ հաջորդ կետում ավարտվելու համար: Գնացքի ընթացքը, հորիզոններ կլանող երկաթուղային գիծը ընկալվում են որպես անսահմանի մաս: Շարժմանը զուգահեռ՝ գնացքի ներսում ժամանակը կանգնում է, շարժվում է աշխարհը, և ժամանակը ներգործում է գնացքից դուրս, բայց ոչ երբեք գնացքի ներսում: Երկաթուղային գծի յուրաքանչյուր կայարան, որտեղ կանգ է առնում գնացքը, ուղևորներին է վերադարձվում ժամանակը, և նրանցից յուրաքանչյուրին տրվում է սեփական ընտրության հնարավորություն՝ շարունակե՞լ, թե՛ ոչ:

⁴⁹¹ Սվիֆթ Զ., Գուլիվերի ճանապարհորդությունները, Երևան, «Անտարես» հրատ., 2013, էջ 164:

Վեպում երազի և իրականության սահմանները միախառնված են: Սա և՛ վերադարձ է դեպի անցյալ, և՛ հիշողության թարմացում է, և՛ ներկայի մեջ մնալու յուրօրինակ ցանկություն, որը ոչ բոլոր դեպքերում է հաջողվում:

Գնացքի արագությունը ժամանակը կարճում է, և երազի ու իրականության սահմանագծին անցյալը դառնում է շոշափելի: Թվում է, թե ժամանակի հետ գնացքն էլ է ետ մղվում: Կտրտված իրականության մեջ գնացքի շարժմանը զուգահեռ հայտնվում են կտրտված պատկերներ, ու առաջանում է անհանգստության զգացողություն («Խճաբար: Խոտերի մեջ կորած զուգահեռ երկաթուղու վրա անջատ ու մեկուսի ժանգոտ վագոն-ցիստեռն: Սյուներ: Գնացքը ետ է դառնում: Գնացքը ետ է դառնում») (էջ 43):

Թե՛ «Գուլշակություններ հայելիներով» պատմվածքում և թե՛ «Ապուլների ուղևորությունը» վեպում անհանգստությանը զուգահեռ շոշափելի դարձած անցյալից հայտնվում է հոր կերպարը. «Գնացքը ճանապարհն էր կարճում: Անհանգիստ էի, քիչ հետո անհանգստությունը որոշակիացավ որպես հիշողություն հորս մասին, ասես հիշողությունը ձգողականություն ուներ, և գնացքն այդ ուղրտ էր մտել: Արդեն դժվարանում էի հիշել հորս դեմքը. տեսողությունս հեռանում էր այդ դեմքից: Լռությունը, որում հայրս էր ընկղմված, առանց իրեն էլ նույնն էր մնալու. լռությունից պակասելու էր մեկը»⁴⁹²:

«Ապուլների ուղևորությունը» վեպում գնացքի առաջ կանգնած Թելմանի մոտ վերադարձը դեպի մանկություն կրկին ուղեկցվում է հոր ներկայությամբ (էջ 42): Իսկ «Գուլշակություններ հայելիներով» վեպի հերոսի համար հոր մահվանը զուգահեռ մանկությունը վերջանում է ու փակված մնում փոքրիկ գնացքի մեջ: Երազի ու իրականության սահմանագծին կայարանի մեծ գնացքը աստիճանաբար փոքրանում է, փակում որբ մնացած հերոսի մանկության վերջին էջը. «Հայրս վագում էր գնացքի կողքից: Շնչասպառ էր լինում: Գուլիս դուրս հանեցի պատուհանից, հարցրեցի՝ ինչու է վագում: Կռահեցի, որ ուզում է ասել՝ գնացք նստած չկա. ուզում է նստել: Ասացի, որ գնացքը կանգնած է: Շարունակում էր վագել: Հարցրեցի՝ ինչու է վագում: Կռահեցի, որ ուզում է պատասխանել՝ հասնել է ուզում: Բերեցի վերջին փաստարկը՝ գնացքը խաղալիք է: Կանգնեց, այտերին արցունքի կաթիլներ տեսա: Կայարանում անշարժ կանգնած էր փոքրիկ, խաղալիք մի գնացք»⁴⁹³: Շոշափելի դարձած անցյալից հերոսին կմասն հոր արցունքներն ու խաղալիք գնացքը, իսկ Թելմանի համար մանկության երազի ավարտը վերջին անգամ կզուգորդվի խաղալիք գնացքի ու հոր ոտքերի հետ, որոնք հարվածում էին իրեն (էջ 42-43):

Վեպի վերջնամասում հոգեկան հիվանդներից մեկը հիշում է իր երազներից մեկը. «...իրենց բակում՝ գետնին, փոքրիկ, շատ փոքրիկ երկաթե ռելսեր կային, և դրանցով մի փոքրիկ ու սև շոգեբարձ է սուրում՝ ուղիղ իր ոտքերի տակով: Նա կռացավ, որ բարձրացնի այդ շոգեբարձը, բայց չկարողացավ նույնիսկ տեղից պոկել, այնքան էր ծանր, հագիվ կարողացավ մի քանի ակնթարթ կանխել դրա ընթացքը. փոքրիկ շոգեբարձը կայծեր էր թռցնում ռելսերից և դրանց կպած՝ չէր թողնում բարձրացնեն իրեն, ու պոկվեց, սլացավ, պարզապես անհնար էր, Ժորիկը վեր թռավ՝ սարսափած փոքրիկ գնացքի ծանրությունից» (էջ 153):

Խաղալիք գնացքի ու իրական գնացքի մոտիվ հայտնվում է նաև «Երկվորյակների արևը» վեպում: Երազի և իրականության սահմանագծին գնացքի փոխակերպումը խաղալիք գնացքի և հակառակը վեպում արտահայտվում է երկվորյակ եղբայրների միջոցով՝ ունենալով անհանգստության ու կորցրած ժամանակի գործառույթ («Երկաթգծերի արանքում պառկելն ապահովություն էր ներշնչում արդեն, երբ գնացքը

⁴⁹² Սարիբեկյան Հ., Գուլշակություններ հայելիներով, Երևան, «Չանգակ-97» հրատ., 2003, էջ 24:

⁴⁹³ Նույն տեղում, էջ 25:

հեռացել էր այնքան, որ խաղալիք էր դարձել»⁴⁹⁴ կամ «Գետնին փոքրիկ, խաղալիք գնացք տեսավ, ուզում էր վերցնել հրաշք խաղալիքը: Բռնեց, հազիվ կատեցրեց ընթացքն ու չկարողացավ բարձրացնել տեղից. երագում զգաց, որ խաղալիք գնացքն իսկական գնացքի զանգված ունի»⁴⁹⁵): Խաղալիքի միջոցով կորցրած ժամանակի վերադարձը արտահայտվում է նաև Սարիբեկյանի «Յոգեհանգստի ձյունը» պատմվածքում. «Մայրս բերել էր իմ սիրած խաղալիք մեքենան, քոջս տիկնիկը, անցյալը վերադարձվում էր մեզ»⁴⁹⁶:

Իրականի ու երևակայականի միջև սահմաններ գոյություն չունեն: Սահմանների նույնացումը վեպում հանգեցնում է նրան, որ հերոսները միաժամանակ կարող են լինել և՛ գնացքում, և՛ ադրբեջանական հոգեբուժարանում. «Քիչ առաջ հիվանդանոցում էր, հիմա՝ գնացքում» (էջ 92):

Վեպում գրեթե ամեն ինչ առնչվում է գնացքի հետ, այդ թվում հիշողությունը. «Մամեղովը գնացք է նստել: Յիշողության գնացքը: Եվ ինչ հաճախ են անցյալում թունելները» (էջ 55), նույնիսկ՝ կարի մեքենան. «Մեր տանը գերմանական Zinger մակնիշի կարի մեծ մեքենա կար... Մեքենան նաև թև-պտուտակ ուներ՝ իսկը հին շոքեքարշի անիվ» (էջ 76):

Այսպիսով՝ եթե մի դեպքում գնացքն ու երկաթուղին հարաբերվում են պատերազմին և դառնում պատերազմի խորհրդանիշ՝ ցույց տալով պատերազմի ողջ աբսուրդը, անհեթեթությունն ու վախը, ապա մյուս դեպքում՝ ժամանակային շրջափոխին, որտեղ ժամանակը նեղանում է գնացքի խցիկի չափ:

FUNCTIONAL SIGNIFICANCE OF THE TRAIN AND RAILWAY IN THE NOVEL «JOURNEY OF IDIOTS» BY HRACHYA SARIBEKYAN

ARAM KHACHATRYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology,
Department of Armenian Literature, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is a comprehensive study of the motive of trains and railways, which are of key importance in Hrachya Saribekyan's novel "The Journey of Idiots". In all of Saribekyan's books published to date, the theme of trains and railways passes from one work to another, giving the impression that the writer will never give up this motive.

The task consists in a comprehensive study, both in content and in structure, of the above motive. The analysis, when necessary, was carried out in the context of the author's previous work. In some cases, the context expands to include works from Armenian and world literature based on this motive.

The research was carried out by the following methods: comparison, analysis, synthesis and deduction.

The novel was published in 2015, and at the moment there has been no comprehensive research on it, which determines the novelty and relevance of the article. As a result of our

⁴⁹⁴ Սարիբեկյան Զ., Երվորյակների արևը, Երևան, «Անտարես» հրատ., 2012, էջ 24:

⁴⁹⁵ Նույն տեղում, էջ 25:

⁴⁹⁶ Կայարան (գրական տարեգիրք), Երևան, 2013, էջ 59:

research, we came to the conclusion that the motive of the train and the railway in this novel is expressed in two meanings. In one case, it is associated with time, a sense of time and the life cycle, in another it becomes a symbol of war, death, fear and uncertainty. In both cases, the change in the functional meaning of the motive affects both the structure of the novel and the psychological development of its characters. This motive, widely used in world literature, appears in the best form in Saribekyan's novel.

Key words: Roman, train, railway, Armenian literature, motive, war, symbol, time.

ФУНКЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ ПОЕЗДА И ЖЕЛЕЗНОЙ ДОРОГИ В РОМАНЕ «ПУТЕШЕСТВИЕ ИДИОТОВ» ГРАЧЬИ САРИБЕКЯНА

АРАМ ХАЧАТРЯН

*соискатель кафедры новейшей армянской литературы
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является комплексное исследование мотива поездов и железных дорог, которые имеют ключевое значение в романе Грачьи Сарибекяна «Путешествие идиотов». Во всех изданных к настоящему времени книгах Сарибекяна тема поездов и железных дорог переходит из одного произведения в другое, создавая ощущение, что писатель никогда не откажется от этого мотива.

Задача нашей работы состоит во всестороннем исследовании как содержания, так и структур данного мотива. Анализ, по мере необходимости, производился в контексте более ранних произведений автора. В некоторых случаях контекст расширяется и включает произведения из армянской и мировой литературы, в которых этот мотив станет постоянным в его творчестве.

Исследование было осуществлено следующими методами: сравнение, анализ, синтез и дедукция.

Роман был опубликован в 2015 году, и на сегодняшний день по нему еще не производилось всеобъемлющего исследования, что и определяет новизну и актуальность статьи. В результате исследования мы пришли к выводу, что мотив поезда и железной дороги в этом романе выражает два значения. В одном случае он связан со временем, чувством времени и жизненным циклом, в другом он становится символом войны, смерти, страха и неопределенности. В обоих случаях изменение функционального значения мотива сказывается и на структуре романа, и на психологическом развитии его героев. Этот мотив, широко используемый в мировой литературе, в романе Сарибекяна находит свою наилучшую реализацию.

Ключевые слова: роман, поезд, железная дорога, армянская литература, мотив, война, символ, время.